



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՎՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

20 հոկտեմբերի 2014 թվականի

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով «ԲԵԼԻՆԻ» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործը քննության
ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Յ.

Նամաձայն ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
«ԲԵԼԻՆԻ» ՓԲԸ-ն դիմել է ՆՆ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Ապրանքային նշանների մասին» ՆՆ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ
կետը և դրա շուրջ ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով որ
կիրառելի է օգտագործման մեջ գտնվող առավել վաղ գոյություն ունեցող ցանկացած
նշանի նկատմամբ՝ չկարևորելով ՆՆ-ում իրավական պահպանություն ունենալու
փաստական հանգամանքը, ճանաչել ՆՆ Սահմանադրության 1-ին և 33.1-րդ
հոդվածներին և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետին հակասող և անվավեր»:

Դիմողը գրնում է, որ վիճարկվող նորմը չսահմանելով հստակ ձևակերպում,
ինչպես կիրառողի /վարչական մարմնի/, այնպես էլ դրա իրավազափության հարցը

քննող դատարանների կողմից փարաբնույթ մեկնաբանությունների արդյունքում առիթ է հանդիսացել մերժելու դիմողի՝ ապրանքային նշանի գրանցումը:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը չի ներկայացրել վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պարզաձև իրավական հիմնավորումներ: Մասնավորապես, նրա փաստարկները վերաբերում են վարչական մարմնի և դատարանների կողմից վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափությանը, այսինքն, վերջին հաշվով՝ դատարանի գործողության իրավաչափությանը, ինչպես նաև իր գործով կայացված դատական ակտերի իրավաչափությանը: Ներկաբար, դիմողի փաստարկներն ակնհայտ անհիմն են, քանի որ սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՆՏ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համարեքստում ՆՏ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայրնել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՆՏ սահմանադրական

դարարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհավական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դատական կազմը նաև գտնում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վերոհիշյալ նորմի հակասահմանադրականության վիճարկմամբ: Այսինքն՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց:

Նամաձայն ՆՏ սահմանադրական դարարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դարարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դարարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դարարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՆՏ սահմանադրական դարարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«ԲԵԼԻՆԻ» ՓԲԸ -ի անհավական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

20 հոկտեմբերի 2014 թվականի

ՍԴԴԿՈ/1-18